600.0216.20.07.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հուլիսի 2016 թվականի №216Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԿՈՂԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐՀԱՆ ՊՈՄՊՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբ համայնքի գյուղապետարանի և «Արարատշին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Կողմեր) կողմից կազմված նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման եռակողմ պայմանագրի (այսուհետ՝ Միացման պայմանագիր) նախագիծը,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի հունիսի 24-ի №04-ԿՀ-02/2451 գրությունը՝ Միացման պայմանագրի նախագծին համապատասխան Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբ համայնքի խմելու ջրի ջրհան պոմպն էլեկտրական ցանցին միացնելու համար Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից անհատական որոշում ընդունելու վերաբերյալ,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Կողբ համայնքի խմելու ջրի ջրհան պոմպը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին (այսուհետ՝ էլեկտրական ցանց) միացվում է Կողմերի միջև փոխհամաձայնեցված կարգով:

2) Էլեկտրական ցանցին միացման վճարը հաշվարկվում է համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի №659Ն որոշման:

3) Էլեկտրական ցանցին միացման պայմանագիրը կնքվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում:

4) Էլեկտրական ցանցին միացման պայմանագրի կնքման օրվանից մինչև էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնելու առավելագույն ժամկետը սահմանվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.5-րդ կետի համաձայն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
20 հուլիսի 2016թ.
ժամը 16[00]